



Մամուլի հաղորդագրություն
15 հոկտեմբերի 2021թ.

ՔՈԱՖ շրջանավարտների ստարտափ գաղափարների ընտրություն և իրագործում

ԵՐԵՎԱՆ - Հոկտեմբերի 16-ին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) երևանյան գրասենյակում տեղի կունենա ՔՈԱՖ շրջանավարտների համար նախատեսված Ինկուբացիոն ծրագրի (COAF Alumni Incubation Program) դեմո օրը, որի ժամանակ շրջանավարտների կողմից կներկայացվեն տուրիզմի, ագրոտեխնոլոգիայի և կանաչ տեխնոլոգիաների ոլորտներին առնչվող 5 ստարտափ գաղափարներ: Ժյուրիի կողմից ընտրված 3 գաղափարների իրականացումը կֆինանսավորվի Imagine Hub-ի կողմից: Միջոցառմանը ներկա կլինեն նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վահագն Խաչատուրյանը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

ՔՈԱՖ շրջանավարտների համար նախատեսված Ինկուբացիոն ծրագիրն իրականացվում է StartDoon բիզնես արքսելերատորի և Imagine Hub-ի հետ համատեղ: Նպատակն է զարկ տալ Հայաստանում գյուղական համայնքների զարգացմանը՝ ապակենտրոնացնելով հայաստանյան ստարտափ էկոհամակարգը՝ բիզնես նախաձեռնությունների հնարավորություններ ստեղծելով գյուղական համայնքներում: Վեցշաբաթյա ծրագիրն մասնակցել են ՔՈԱՖ-ի շուրջ 40 շրջանավարտներ, որոնք վեր են հանել գյուղական համայնքներում առկա խնդիրներ ու, ի դեմս իրենց ստարտափ գաղափարների, առաջարկում են նորարարական լուծումներ: Վեց շաբաթների ընթացքում Ինկուբացիոն ծրագրի մասնակիցներն անցել են ձեռներեցության, գաղափարների գեներացման, թիմերի ձևավորման, բիզնես հայեցակարգերի մշակման և դրանց ներկայացման հմտությունները զարգացնող դասընթացներ, աշխատել են ոլորտի հայաստանյան ու ֆրանսիացի փորձագետների հետ, ստացել պոտենցիալ ներդրողների հետ շփման ու կապերի հաստատման հնարավորություններ, ինչպես նաև ձևավորել են թիմեր ստարտափ գաղափարների շուրջ:

Մրցանակային ֆոնդը կազմում է 10,500 ԱՄՆ դոլար: Առաջին տեղը գրավող ստարտափ գաղափարի իրականացմանը կհատկացվի 5,000 ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնողներին՝ համապատասխանաբար 3,000 և 2,500 ԱՄՆ դոլար:



CHILDREN
OF ARMENIA
FUND

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: